ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՍԱՏՈՒՐԻ ԴԱՐԲԻՆՅԱՆ

Խմբավար, բառահար,
Կոմիտասի անվ. ԵՊԿ պրոֆեսոր

Մի ակարի պատմություն

Կոմիտասի հանրահայտ «Կալի երգ» խմբերգի հետ կապված հիշում եմ հետևյալ դրվագը: 1968թ-ին, երբ որպես երգիչ արտիստ էի Հայաստանի երգչախմբային ընկերության երգչախմբում, մարտի 7-ին մեզ այցելեց Երևանում հյուրընկալվող արգենտինացի տաղանդավոր կոմպոզիտոր և դիրիժոր Ռոդրիգես Ֆորեն: Հանդիպման ընթացքում նա խնդրեց հայկական ժողովրդական մի երգ կատարել: Երգչախմբի գեղարվեստական ղեկավար Թաքուլ Ալթունյանի առաջարկությամբ, խմբավար Գրիգոր Սանդալջյանը ղեկավարեց Կոմիտասի «Կալի երգ»ը, մենակատարեց՝ Հակոբ Ավետիսյանը:

Կատարման ավարտին Ռ. Ֆորեն, հուզնկալ, երգչախմբի առջև խորը խոնարհվեց և ասաց. «Ես այսպիսի երաժշտություն երբեք չեմ լսել»: Սա Կոմիտասի երաժշտության գնահատանքն էր արգենտինացի անվանի կոմպոզիտորի կողմից: Այդ հանդիպումից մնացել է մի խմբական լուսանկար, որ սիրով տրամադրում եմ ընթերցողին:

Հայաստանի Երգչախմբային ընկերության երգչախումբ, գեղարվեստական ղեկավար
ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, ԵՊԿ պրոֆեսոր Թաքուլ Ալթունյան,
Երկրորդ շարքում ձախից յոթերորդը՝ Ռոդրիգես Ֆորե, Գրիգոր Սանդալջյան,
վերջինը՝ Հովհաննես Դարբինյան,
1-ին շարքում աջից չորրորդը՝ Հակոբ Ավետիսյան